**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Պարույր Սևակ համայնք, 5Փ 13, հեռ. 023462111

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մայիսի 2012թվականի N 5-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՈՏԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14.01.2010թ-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին,, կարգի 9-րդ կետով՝ Պարույր Սևակ համայնքի ավագանին

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

համաձայնություն տալ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ Տիգրանաշեն համայնքից հյուսիս գտնվող պետական սեփականություն հանդիսացող 105 հա գյուղատնտեսական արոտի վարձակալության տրամադրելուն:

- վարձավճարի մեկնարկային գինը – 42000դրամ

կողմ (3) դեմ (0) ձեռնպահ (0)

Տ. Միքայելյան____________
Ա. Նիկողոսյան____________
Գ. Օհանյան____________

Համայնքի ղեկավար՝ ____________ Է. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Պարույր Սևակ համայնք, 5Փ 13, հեռ. 023462111

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մայիսի 2012թվականի N 6

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 622 հոդվածով Պարույր Սևակ համայնքի ավագանին

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

հանձնարարել համայնքի ղեկավարին վաղաժամկետ լուծել պայմանագրերը համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող արոտների այն վարձակալների հետ, որոնք թույլ են տվել վարձակալության պայմանագրի խախտումներ:

կողմ 3 դեմ 0 ձեռնպահ 0

Տ. Միքայելյան________________

Ա. Նիկողոսյան________________

Գ. Օհանյան________________

Համայնքի ղեկավար՝ Է. Ստեփանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Պարույր Սևակ համայնք, 5Փ 13, հեռ. 023462111

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2012թվականի N 7-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 63 հոդվածի 3-րդ և 67 հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է թույլատրել համայնքի ղեկավարին

1. համայնքի անշարժ գույքի հատակագծին համապատասխան վարելահողերից /ծածկագիր 03-078-104/ առանձնացնել 12հա վարելահող և տալ համապատասխան ծածկագիր համաձայն կից ներկայացվող հատակագծի:

2. համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը օտարել աճուրդ վաճառքի միջոցով և հաստատել աճուրդի մեկնարկային գին՝ համաձայն աղյուսակի :

3. սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

| Լոտ | գտնվելու վայրը | ծածկագիրը | մակերեսը | նպատակային նշանակությունը | հողատեսքը | գործառնական նշանակությունը | մեկնարկային գինը | սահմանափակումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | գ. Պարույր Սևակ | | 12 հա | գյուղատնտեսական | վարելահող | գյուղ. գործունեություն | կադաստրային արժեքի 50 տոկոս | չկան |

կողմ 3 դեմ 0 ձեռնպահ 0

Տ. Միքայելյան________________

Ա. Նիկողոսյան________________

Գ. Օհանյան________________

Համայնքի ղեկավար՝ Է. Ստեփանյան